Արձանագրություն N 3

Երևան քաղաքի կամարանցումների վերանորոգման և գունազարդման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/122» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

18.05.2017թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Հարությունյան /բացող/,
Բացակայում էր՝ Ա. Համբարձումյան
Ա. Հարությունյան /բացող/

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին

(Տ. Իգիթյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/122» ծածկագրով գնման ընթացակարգի 2ՐՋանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին /1-ին չափաբաժնի մասով/ ծանուցված բոլոր մասնակիցներից մասնակցել է «Վարդսա» ՍՊԸ-ն:

1.2 Բանակցությունների վարման համար հանձնաժողովի կողմից սահմանվել է 5 (հինգ) րոպե ժամանակահատված, որի ընթացքում մասնակցի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ (Հավելված 1 կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/122» ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ գնային առաջարկների նվազեցման բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտի դրությամբ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Վարդսա» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Սասունասար» ՍՊԸ-ն:

2.2 Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Վարդսա» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Մառք» ՍՊԸ-ն :

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 18.05.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 18.05.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում

փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 23.05.2017թ. ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ե. Կարապետյան

Քարտուղար ---------- Ա. Համբարձումյան

Հավելված N 1

Երևան քաղաքի կամարանցումների վերանորոգման և գունազարդման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/122» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության

ք. Երևան

18 մայիսի 2017թ.
Ժամը 11:30

<<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացված բանակցությունների ընթացքում՝ «Վարդսա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Չափ. համարը	ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՆ /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳԻՆ /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Ստորագրություն
1	30 000	29 900	

„ՎԱՐԴՍԱ" ՍՊԸ
Մասնակցի անվանումը (անունը) (պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)